

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 35/8

8 սեպտեմբերի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Մուրադ Մխիթարյանի լիազոր ներկայացուցչի 12.08.2015 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ՖՆ Գյումրու ՏՀՏ 22.06.2015 թ-ի թիվ 6112642 ակտի դեմ:

#### **Ա/Ձ Մուրադ Մխիթարյանի լիազոր ներկայացուցչի գանգատում բերված փաստարկները.**

2015 թ-ի հունիսի 10-ին Գյումրու տարածքային հարկային տեսչության կողմից Ա/Ձ Մուրադ Մխիթարյանի մոտ բացվել է ստուգում 10 աշխատանքային օր ժամանակահատվածով աշխատողի աշխատանքի ընդունումը օրենսդրության նորմերին համապատասխանության վերաբերյալ: Ստուգման արդյունքում Արամայիս Խաչատրյանը, որը հանդես է եկել որպես Ա/Ձ Մուրադ Մխիթարյանի կողմից օրենքով սահմանված կարգով լիազորված անձ, ստորագրել է համապատասխան փաստաթղթերը: Արամայիս Խաչատրյանի կողմից ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 318-ի դրույթներին համապատասխան որպես Ա/Ձ Մուրադ Մխիթարյանի ներկայացուցիչ հանդես գալը Գյումրու ՏՀՏ տեսուչների կողմից դիտվել է որպես աշխատանքային բնույթի գործառույթ՝ վերջինովս տալով համապատասխան օրենսդրական դրույթների սխալ և կամայական մեկնաբանություն: Արդյունքում տեսուչներն անտեսել են յուրաքանչյուր ոքի իրավունքը հանդես գալ ներկայացուցիչների միջոցով:

Ակտը չի բխում ՀՀ գործող օրենսդրության պահանջներից հետևյալ պատճառաբանությամբ.

1. Ակտի 1-ին կետով արձանագրվածը չի համապատասխանում իրականությանը, քանի որ Արամայիս Խաչատրյան անուն, ազգանունով աշխատող Ա/Ձ Մուրադ Մխիթարյանը չունի:

Եթե նույնիսկ ենթադրենք, որ կա նման աշխատող, ապա հարկային մարմինը պետք է պարզեր, թե այդ չգրանցված աշխատողն ինչ աշխատանք է կատարում, արդյոք նման աշխատանք կատարելու կարիքն առկա է, թե ոչ: Նման բան հարկային մարմնի կողմից չի արվել և չէր կարող արվել մի պարզ պատճառով, որ Ա/Ձ Մուրադ Մխիթարյանի ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնելու ժամանակ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող համապատասխան աշխատակիցների բոլոր աշխատանքային պայմանագրերը ներկայացվել էին, որի արդյունքում հարկային մարմնի համար միանշանակ պարզ էր, որ բոլոր աշխատողները ձևակերպված են: Ավելին, ակտում նշելով չգրանցված աշխատողի առկայության մասին, հարկային մարմինը չի նկարագրել և չէր էլ կարող նկարագրել այդ չգրանցված աշխատողի կատարված կամ կատարվող աշխատանքը, քանի որ ի սկզբանե նման բան չի եղել:

2. Ինչ վերաբերվում է ակտում նշված Արամայիս Խաչատրյան անձնավորությանը, ապա նա հանդիսանում է Ա/Ձ Մուրադ Մխիթարյանի լիազորված անձը: Ավելին, նա նոտարական վավերացումով լիազորագրի համաձայն, որը տրվել է Ա/Ձ Մուրադ Մխիթարյանի կողմից 2014թ-ի փետրվարի 26-ին, հանդիսանում է նրա ներկայացուցիչը և իրավասու է ներկայացնել նրա շահերը մի շարք պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, այդ թվում՝ հարկային տեսչությունում:

Նշվածի արդյունքում ստացվում է, որ Արամայիս Խաչատրյանի գրույցը հարկային տեսուչների հետ, վերջիններիս կողմից որակավորվել է որպես աշխատանքի կատարում, իսկ անձամբ Արամայիս Խաչատրյանը՝ չգրանցված աշխատող:

3. Հարկային մարմինը նշված ակտը կազմելիս թույլ է տվել «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետի

պահանջների խախտում, այսինքն՝ ստուգումների ընթացքում թույլ է տրվել օրենսգրքում ամրագրված դրույթի սխալ մեկնաբանություն՝ դիտելով ՀՀ քաղաքացիական Օրենսգրքի 318-րդ հոդվածով նախատեսված ներկայացուցչությունը որպես աշխատանքային իրավահարաբերություն: Տվյալ դեպքում ակտում նշվել է, որ խախտվել են ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի պահանջները: Սակայն հարկ է նշել, որ վերջինս ընդամենը սահմանում է աշխատանքային հարաբերությունների ծագման հիմքերը, այսինքն՝ հարաբերությունների ծագման օրենքով սահմանված հիմքերը չեն կարող խախտվել, կարող են խախտվել օրենքով սահմանված պահանջները, իսկ նշված հոդվածը պահանջ չի սահմանում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի դրույթներով Ա/Ձ Մուրադ Մխիթարյանի լիազոր անձ Արամայիս Խաչատրյանը խնդրում է Գյումրու ՏՀՏ 22.06.2015 թ-ի թիվ 6112642 ակտը ճանաչել անվավեր:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Գյումրու ՏՀՏ պետի 10.06.2015 թ-ի թիվ 6112642 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Մուրադ Մխիթարյանի մոտ իրականացվել աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (իրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Գյումրու ՏՀՏ 22.06.2015 թ-ի թիվ 6112642 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 60.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ սույն թվականի հունիսի 12-ին Ա/Ձ Մուրադ Մխիթարյանին պատկանող և ք.Երևան, Տիգրան Պետրոսյան 2/1 հասցեում գործող ֆոնդային արժեքների հետ կապված բորսային գործառույթների իրականացման վայրում փաստացի աշխատանք իրականացնող վարձու աշխատողների և աշխատանքային պայմանագրերով գրավոր ձևակերպված վարձու աշխատողների համեմատությունից պարզվել է, որ թվով 1 (մեկ) վարձու աշխատող՝ Արամայիս Խաչատրյանը, սահմանված կարգով գրավոր ձևակերպված չէ: Ա/Ձ Մուրադ Մխիթարյանի կողմից խախտվել է ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները: Արդյունքում կիրառվել է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի ա) կետով նախատեսված պատասխանատվության միջոցը՝ գումարով 60.000 դրամ:

Քննարկվող դեպքում, Ակտի 1-ին կետով արձանագրված խախտման համար կիրառվել է «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված պատասխանատվության միջոցը: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի և (կամ) գրավոր պայմանագրի բացակայության) փաստը լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով արձանագրվելու դեպքում գործատուն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված և արտոնագրային վճար վճարող չհանդիսացող) տվյալ (արձանագրման) ամսում յուրաքանչյուր չձևակերպված վարձու աշխատողի համար հաշվարկում և վճարում է եկամտային հարկ»:

«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստը լիազոր մարմնի կողմից արձանագրելու կարգը և արձանագրության ձևը սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 25 հուլիսի 2013 թ-ի N 1259-Ն որոշմամբ:

Վերոգրյալից հետևում է, որ աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստը լիազոր մարմնի կողմից պետք է արձանագրվի Հայաստանի Հանրապետության կառավարության 25 հուլիսի 2013 թ-ի N 1259-Ն որոշմամբ սահմանված կարգով, ինչպես նաև՝ կազմվի վերջինովս սահմանված արձանագրության ձևը:

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովն արձանագրեց, որ Ա/Ձ Մուրադ Մխիթարյանի մոտ աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության ստուգումն իրականացվել է առանց Հայաստանի Հանրապետության կառավարության 25 հուլիսի 2013 թ-ի N 1259-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթների պահպանման, ինչպես նաև ստուգման ընթացքում չի կազմվել նշված որոշմամբ սահմանված արձանագրության ձևը:

Ակտի ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրեց նաև, որ այն սահմանված կարգով կնքված չէ: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 4-ին մասի համաձայն. «Վարչական ակտը պետք է պարունակի՝

...

ժ) ակտն ընդունած վարչական մարմնի պաշտոնական կնիքը»:

Վերը բերված փաստական հանգամանքներից հետևում է, որ Ակտը կազմվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 4-ին մասի, «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 25 հուլիսի 2013 թ-ի N 1259-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթների պահանջների խախտմամբ:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.»:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ Ա/Ձ Մուրադ Մխիթարյանի լիազոր ներկայացուցչի գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Գյումրու ՏՀՏ 22.06.2015 թ-ի թիվ 6112642 ակտը:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**